




ՄԱՔՈՒՐ ԴԱՇԻՆՔ.

Մատչելի ծառայություններ Գորիս և Գորայք բազմաբնակավայր համայնքների համար ծրագիր



Գորայք բազմաբնակավայր համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլան



2017թ.



Գորիս համայնք



Գորայք համայնք



Երագիրը ֆինանսավորվում է Եվրոպական սրտության կողմից:

Գորայքի համայնքապետարանը շնորհակալություն է հայտնում ստորև նշված անձանց քաղաքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման ու նախապատրաստական աշխատանքներում նշանակալից ներդրում ունենալու համար:

«Մաքուր դաշինք» ծրագիր

Արմինե Թուխիկյան, «Ուրբան» հիմնադրամ, ծրագրի ղեկավար մինչև (2017թ ապրիլ)

Սամվել Նազարյան, «Ուրբան» հիմնադրամ, ծրագրի ղեկավար (2017թ ապրիլից)

Արմեն Վարոսյան, «Ուրբան» հիմնադրամ, Ռազմավարական պլանավորման գծով ավագ փորձագետ

Կարեն Հովհաննեսյան, «Ուրբան» հիմնադրամ, Աղբահանության կառավարան ավագ մասնագետ

Արմեն Ներսիսյան, Սիսիան համայնքների միություն, Գորայք համայնքում ծրագրի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	Error! Bookmark not defined.
ՆԱԽԱԲԱՆ	5
Ընդհանուր տեղեկություններ	5
Գործընթաց և մեթոդաբանություն	5
ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	7
Ընդհանուր տեղեկություններ	7
Օրենսդրական դաշտ և կառավարման կառուցվածք	8
Աղբահանության կառավարման ենթակառուցվածքները	10
Աղբի վերամշակման հնարավորություններ	13
Ֆինանսական –տնտեսական ցուցանիշներ	15
Իրավիճակային վերլուծություն (SWOT)	17
ԳԼՈՒԽ 2. Տեսլական և երկարաժամկետ նպատակներ	19
Աղբահանության ոլորտները և ռազմավարական նպատակները	19
ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ	22
Հիմնահարցերի դասակարգման չափանիշները	22
ԳԼՈՒԽ 4. ԽՆԴԻՐՆԵՐ	25
ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29

ԲԲՇ - Բազմաբնակարան շենքեր
ԳՀՄ - Գորայքի համայնքների միություն
ԵՄ - Եվրամիություն
Կազմակերպություն - համայնքում աղբահանության ծառայություն մատուցող կազմակերպությունը
ԿԱՕ - Կազմակերպություններ և առևտրի օբյեկտներ
ՀԲ - Համաշխարհային բանկի վան - աղբահանության կառավարման ռազմավարական պլան
ԿԿԹ - Կոշտ կեցադային թափոններ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՈւՀ - «Ուրբան» Հիմնադրամ

Ընդհանուր տեղեկություններ

Գորայք համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանը մշակվել է «Մաքուր դաշինք. մատչելի ծառայություններ Գորիս և Գորայք բազմաբնակավայր համայնքների համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից:

Ռազմավարության հիմքում ընկած է միջազգայնորեն ընդունված՝ Համաշխարհային Բանկի և Ժամանակակից գրականության մեջ օգտագործվող մեթոդաբանությունը: Պլանը կազմելու համար ստեղծվել է հանձնաժողով և աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի նպատակն է Գորայք համայնքում աղբահանության խնդիրների մասնակցային վերհանումը և Պլանի կազմումը «Ուրբան» Հիմնադրամի փորձագետների հետ համատեղ՝ նրանց կողմից կազմակերպված սեմինարների և մատուցված ուսուցողական նյութերի միջոցով: Այդ նպատակով մշակվել և համայնքին է տրամադրվել համայնքի ռազմավարական պլանների մասնակցային մշակման ուղեցույց: Պլանի մշակումը կատարվել է մասնակցային գործընթացով, այսինքն՝ հիմնվել է մտքերի փոխանակման և ներքևից-վերև մոտեցման սկզբունքի վրա: Հաշվի են առնվել Գորայք բազմաբնակավայր համայնքի աղբահանության կառավարման գործընթացին առնչվող գործնականում բոլոր գլխավոր հիմնախնդիրները, կատարվել է դրանց լուծման ճանապարհների և հնարավոր տարբերակների վերլուծություն:

Գործընթաց և մեթոդաբանություն

Պլանի մշակումը կատարվել է գրականության ուսումնասիրության և եղած միջազգային փորձի հիման վրա: Օգտագործված գրականության ցանկն իր մեջ ներառում է նաև ՀԲ-ի և ԵՄ-ի կողմից մշակված և հրատարակված նյութեր: Հաշվի առնելով եղած փորձը՝ ռազմավարությունը մշակվել է հայաստանյան իրականությանը համապատասխան: Պլանի մշակումն իրականացվել է հանձնաժողովի և աշխատանքային խմբի անդամների հետ կազմակերպված մի շարք հանդիպումների միջոցով: Ստորև աղյուսակում ներկայացված են հանձնաժողովի և աշխատանքային խմբի հետ հիմնական հանդիպումների թեմաները: Պլանը մշակվել է Աղյուսակ 1-ում ներկայացված գործընթացի, առանձին հանդիպումների, մասնակցային ինտերակտիվ քննարկումների հիման վրա:

Աղյուսակ 1. Աղբահանության կառավարման ռազմավարության մշակման գործընթացը և պատասխանատուները

Գործողություն	Իրականացնող
1. Գորայք համայնքում կենցաղային թափոնների կառավարման ընկալումների հետազոտություն	ՈւՀ
2. Համայնքի ղեկավարների կողմից Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ռազմավարական պլանի (ԿԿԹԿՌՊ) մշակման նպատակով Հանձնաժողովի և աշխատանքային խմբի ստեղծում	Գորայք համայնք
3. Մասնակցային եղանակով ռազմավարական պլանների մշակման մեթոդաբանության տրամադրում և դասընթացի անցկացում Աշխատանքային խմբի հետ	ՈւՀ
4. Աշխատանքային խմբի հանդիպում համայնքում հարցման արդյունքների ծանոթացման, հիմնախնդիրների վերհանման նպատակով	ՈւՀ` Գորայքի համայնքապետարանի աջակցությամբ
5. Գորայք համայնքում ԿԿԹ կառավարման տեսլականի սահմանում, խնդիրների սահմանում	Գորայք համայնք, ՈւՀ և ՍՀՄ
6. Դասընթաց Աշխատանքային խմբի հետ առաջնահերթ խնդիրների դասակարգման վերաբերյալ:	ՈւՀ` Գորայքի համայնքապետարանի աջակցությամբ
7. ԿԿԹ կառավարման ոլորտում վեր հանված առաջնահերթ խնդիրների խնդիրների դասակարգում և առաջնահերթության սահմանում աշխատանքային խմբի կողմից	Գորայք համայնք, ՈւՀ
8. ՈւԹՀՍ վերլուծություն, համայնքի խնդիրներից բխող համայնքային ծրագրերի մշակում	Գորայք համայնք, ՈւՀ և ՍՀՄ
9. Համայնքի ԿԿԹԿՌՊ-ի մշակում	ՈւՀ
10. Համայնքային ժողով ԿԿԹԿՌՊ-ն ներկայացնելու համար	Գորայք համայնք
11. Համայնքի ԿԿԹԿՌՊ-ի հաստատում ավագանու կողմից	Գորայք համայնք

ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ

Գորայք բազմաբնակավայր համայնքը գտնվում է Սյունիքի մարզում, որի մարզկենտրոնն է Կապան համայնքը: Համայնքը կազմավորվել է 2016 թվականի սեպտեմբերին՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի 4 համայնքների խոշորացման արդյունքում՝ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ-100-Ն օրենքով: Այն ընգրկում է Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան գյուղական բնակավայրերը:

Գորայք համայնքը գտնվում է մարզկենտրոնից 127 կմ, իսկ Սիսիանից՝ 30 կմ հեռավորության վրա: Բազմաբնակավայր համայնքի հաշվառված բնակչությունը 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ 1842 է: Որից՝ ըստ բնակավայրերի. Գորայքը ունի 513, Սպանդարյանը՝ 456, Սառնակունքը՝ 499 և Ծղուկը՝ 374 բնակիչ: Ամբողջ բնակչությունը բնակվում է անհատական բնակելի տներում:

Մինչև «Մաքուր դաշինք» ծրագրի սկիզբը համայնքում գրեթե աղբահանություն չի իրականացվել: Չկան համատասխան կառավարչական ռեսուրսներ՝ աղբահանող կազմակերպություն, անձնակազմ, անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ աղբատարներ, աղբամաններ, աղբավայր: Ժամանակ առ ժամանակ համայնքը իր բյուջեի հաշվին գնել է աղբահանության ծառայություն աղբահանություն իրականացնող այլ կազմակերպություններից:

Օրենսդրական դաշտ և կառավարման կառուցվածք

Օրենսդրություն, ներքին կանոնակարգեր և որոշումներ

Ոլորտին վերաբերող շրջանակային հիմնական փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) համակարգի զագացման ռազմավարությանն է¹, որի գերակա նպատակն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին: Համակարգի ինտեգրվածությունը ենթադրում է թափոնների կառավարման (հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման, իսկ հետագայում նաև վերամշակման) տեխնոլոգիաների և կառավարման համակարգի համադրություն, որը գործելու է ֆինանսական, ինստիտուցիոնալ և իրավական կայուն հենքի վրա:

Ռազմավարության իրականացման արդյունքում ենթադրվում է, որ.

- ԿԿԹԿ համակարգը բաղկացած կլինի սահմանափակ թվով տարածաշրջանային ենթահամակարգերից (ոչ ավելի քան 10 տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի շահագործում և ենթահամակարգի համայնքներում աղբահանության իրականացում) և կսպասարկի Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:
- Կտեսակավորվի բնակչության կողմից արտադրվող աղբը
- Զուգընթաց կփակվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող աղբավայրերը (եթե դրանց արդիականացումը դիտվի ոչ նպատակահարմար):
- Մասշտաբի էֆեկտի շնորհիվ, կապահովվի աղբահանության հնարավոր նվազագույն դրույքաչափը:
- Մասշտաբի էֆեկտի շնորհիվ նաև կմեծանա համակարգի գրավչությունը մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար
- Էապես կնվազի մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը:

¹ <http://www.mtad.am/hy/koshtzargacmancragrer/>

Ոլորտը կարգավորող «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը հիմնական առավելությունն այն է, որ վարձավճարների գանձումը դարձնում է պարտադիր: Այսինքն՝ վարձավճարների գանգվածային չվճարումները, որոնք համատարած էին նախկինում ամենուրեք (և պայմանավորված էր օրենքի բացակայությամբ) այժմ համարվում է օրենքի խախտում: Օրենքի ընդունմամբ սահմանվում է աղբահանության վճարը՝ որպես համայնքային վճար (պարտադիր գանձույթ), ինչպես նաև սահմանվում է աղբահանության վճար վճարողների շրջանակը: Աղբահանության վճար վճարելու պարտականությունը կրում է համայնքների վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, ինչպես նաև անշարժ գույք չհամարվող այլ շինությունների (օրինակ՝ շարժական կրպակներ եւ այլն) նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձը:

Աղբահանությանը անուղղակիորեն վերաբերող և գործընթացը կարգավորող առկա օրենսդրությունից կարելի է նշել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը, «ՏԻՄ-ի մասին», «Բազմաբնակարան շենքերի մասին», «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքները և «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանը:

ՀՀ ստորագրել է նաև մի շարք, շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող միջազգային համաձայնագրեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են աղբահանության խնդիրներին, աղբահանությանն ուղղակիորեն առնչվող «Թափոնների մասին» օրենքը, որը ընդունվել է 2004 թ.: 2005-2007թթ. ընդունվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներ թափոնների ռեեստրի վարման, գրանցման կարգի վերաբերյալ, որոնք հիմնականում վերաբերում են վտանգավոր թափոններին:

Սակայն «Թափոնների մասին» ՀՀ Օրենքը չի կանոնակարգում ԿԿԹ-ի կառավարումը և միայն թույլ է տալիս Կառավարությանը մշակել ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես աղբավայրերի տեղի ընտրության, ԿԿԹ-ի բաղադրության, արտադրվող, հավաքվող և հեռացվող թափոնների ծավալների վերաբերյալ:

Գորայք համայնք չունի աղբահանություն կանոնակարգող ավագանու որևէ որոշում:

Աղբահանության կառավարման ենթակառուցվածքները

Աղբի կուտակում, հավաքում և հեռացում

Ինչպես նշվեց վեկում, Գորայք բազմաբնակավայր համայնքի բնակչությունը 1842 է: Որից՝ ըստ բնակավայրերի. Գորայքը ունի 513, Սպանդարյանը՝ 456, Սառնակունքը՝ 499 և Ծղուկը՝ 374 բնակիչ, որոնք բնակվում են անհատական բնակելի տներում:

«Մաքուր դաշինք» ծրագրի աշխատակիցների և աշխատանքային խմբի կողմից հաշվարկվել են 2016թ թվականին համայնքում արտադրված աղբի քանակությունն ըստ աղբ արտադրողների՝ բնակչության և առևտրային կազմակերպությունների: Հաշվարկի ժամանակ մեկ մարդու կողմից արտադրված աղբի նորման ընդունվել է 0.55 կգ/մարդ/օր, աղբի խտությունը 250կգ/խոր.մետր, իսկ կազմակերպությունների և առևտրային օբյեկտների (ԿԱՕ-ների) կողմից արտադրված աղբի քանակությունն ընդունվել է բնակչության կողմից արտադրված աղբի քանակության 40%-ին հավասար: Հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Գորայք համայնքում արտադրվող աղբի քանակը և ծավալը

Աղբ արտադրողներ	Տոննա/տարի	Խոր.մ/տարի
Համայնքում արտադրված ընդհանուր աղբի քանակը՝ որից	483	1932
Բնակչություն, որից	345	1380
ԿԱՕ-ներ	138	552

Գործնականում, ինչպես բոլոր գյուղական բնակավայրերում, այնպես էլ Գորայք համայնքում, սննդի թափոնները գրեթե չեն հեռացվում բնակչության կողմից, այլ օգտագործվում են տնտեսության մեջ: Աղբի բաղադրության վերաբերյալ Հայաստանի մի քանի տիպային համայնքներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սննդային թափոնների բաժինը ընդհանուր աղբի մեջ ծավալային առումով միջինը կազմում է 50%, իսկ պլաստիկինը՝ 30% (Переработка бытовых отходов в Армении: обучение персонала, сбор данных, включая анализы отходов, рекомендации по действиям в управлении

от+A1ходами, մայիս, 2011թ - Մազդեբուրգի Օտտո ֆոն Չերիկեի անվան համալսարանի և Երևանի ճարտարագիտական համալսարան): Patricia Butler, 2008 - “Composition of Solid Waste in the Berd Municipal Dump in Tavush Marz, Armenia”):

Ուստի գյուղական բնակավայրերում արտադրված ամբողջ աղբից դեպի աղբավայր հեռացման ենթակա է աղբի ավելի քիչ, քան 50%-ը: Աղբահանության ինքնարժեքի հաշվարկի համար կիրառվում է 50% ցուցանիշը: Փաստորեն, գյուղական բնակավայրերում արտադրված աղբի մի առնվազն կեսը չի հեռացվում բնակիչների կողմից:

Վերոնշյալ արտադրված աղբի ծավալները չեն ներառում շինարարական թափոնները, որոնք բավականին մեծ քանակություն են կազմում:

Ինչպես արդեն նշվեց, Գորայք համայնքը չունի աղբահանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Ծրագրով նախատեսված է համայնքին տրամադրել մասնագիտացված աղբատար, աղբամաններ՝ ընդհանուր աղբի համար և պլաստիկ աղբի առանձնացման համար:

Աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման համար ծախսվող աշխատաժամանակը և ցիկլի տևողությունը

Ստորև աղյուսակում 3-ում ներկայացված են ամփոփ տվյալներ աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման համար ծախսվող աշխատաժամանակի և աղբահանության ցիկլի տևողության վերաբերյալ: Հաշվարկը կատարվել է Գորայք համայնքի աշխատակազմի հետ համատեղ՝ համայնքի տրամադրած տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3. Գորայք համայնքում աղբահանության իրականացման նպատակով ծախսված աշխատաժամանակը և աղբահանության ցիկլի տևողությունը

Անվանում	Ցուցանիշ
Աղբավայր հեռացնելու ենթակա ԿԿԹ ծավալը (խոր.մետր օր)	5
Հավաքման օրեր/տարի	52
Աշխատաժամանակ	
Աշխատաժամանակ (րոպե/օր), որից՝	480
<i>առավոտյան նախապատրաստում</i>	20
<i>մեկնում դեպի հավաքման վայրեր/րոպե</i>	25
<i>հնարավոր կորուստներ</i>	50
<i>արդյունավետ րոպեներ</i>	385
Ցիկլի տևողությունը	
<i>հավաքում</i>	240
<i>դեպի աղբավայր</i>	60
<i>բեռնաթափում</i>	10
<i>դեպի հավաքման վայր</i>	60
Ընդամենը ցիկլի տևողությունը	370
Ցիկլերի քանակ/օր	1.0

Հաշվարկը ներառում է Ծրագրի շրջանակներում տրամադրվող մասնագիտացված աղբատարը և այլ անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքներ, ինչպես նաև այն ծախսերը, որոնք նախատեսված են Ծրագրի շրջանակներում աղբահանության ընկերություն ստեղծելու և նրա բնականոն գործունեությունն ապահովելու համար: Նախատեսված աղբատարի բեռնատարողությունը 10 խոր.մ է՝ 2.5 սեղմման գործակցով այսինքն՝ աղբատարը ի վիճակի է մեկ պտույտ գործելիս տեղափոխել առավելագույնը 25 խոր.մ աղբ: Մասնագիտացված մեքենան խնայողաբար օգտագործելու նկատառումով ենթադրվել է, որ այն լրիվ սեղմում չի կատարի, այլ կսեղմի այնքան, որ տեղավորի 15 խոր.մ աղբ: Նման ծանրաբեռնվածությամբ աղբատարը չորս բնակավայր շրջելով և աղբը աղբավայր հեռացնելով, օրական ի վիճակի է իրականացնել 1 պտույտ:

Աղյուսակ 4. Աղբավայր հեռացվող աղբի կառավարումը նոր մասնագիտացված աղբատար մեքենայի տրամադրումից հետո

Ընդամենը աղբատարների բեռնատարողությունը	12
Աղբատարների միջին բեռնատարողությունը, խոր.մետր	9.6
Օրական փաստացի հնարավոր է հավաքել, խոր.մետր	10
Պակաս է հավաքվում (կամ օգտագործվում), խոր.մետր	-5.2
Տարեկան փաստացի հավաքում, խոր.մետր	248
Տարեկան չկառավարվող աղբ, խոր.մետր	-273

Աղյուսակ 4-ի վերլուծությունից ակնհայտ է, որ նոր մասնագիտացված մեքենայի տրամադրումից հետո Գորայք բազմաբնակավայր համայնքի աղբահանությունը լիովին կկառավարվի: Սակայն ավելի խոր վերլուծությունը և հաշվարկը (Աղյուսակ 3) ցույց է տալիս, որ որպեսզի կառավարի համայնքում արտադրված ամբողջ աղբի ցավալը աղբատար մեքենային բավարար է տարվա մեջ աշխատել ընդամենը 52 օր կամ շաբաթական մեկ անգամ՝ մեկ պտույտ կատարելով չորս բնակավայրերով, այնուհետև դեպի աղբավայր (աղբը տեղակայելու համար ենթադրվում է, որ Գորայք համայնքն օգտագործելու է Ույծի աղբավայրը, որը գտնվում է համայնքից մոտ 39 կմ հեռավորության վրա) ու հետադարձ դեպի Գորայք բնակավայր: Ընդ որում, շաբաթական մեկ անգամ պտույտը կատարելով և արտադրված ամբողջ աղբը հավաքելով հանդերձ՝ մեքենան կլցվի իր բեռնատարողության կեսի չափով: Նման աշխատանքը մեքենայի համար շատ անարդյունավետ է, քանի որ իր մեկ երթի տևողությունը ըստ հաշվարկի չի կարող պակաս լինել մեկ լրիվ աշխատանքային օրվանից, շաբաթվա մնացած 6 օր փաստորեն մեքենան ստաված է ենթարկվել պարապուրդի: Եթե հաշվի առնենք, որ Ծրագրի շրջանակներում ներդրվելու է պլաստիկ թափոնների տեսակավորում և նորմալ տեսակավորման դեպքում աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը կկրճատվի 15-25%-ով (որպես գյուղական բնակավայր), ապա մեքենան նույնիսկ կիսով չափ չի լցվի:

Աղբի վերամշակման հնարավորություններ

Համայնքում թափոնների տեսակավորում և վերամշակում չի կատարվում: Բակիչները հիմնականում վերօգտագործում են սննդի թափոնները:

Հայաստանում աղբի տեսակավորում դեռևս իրականացվում է հաշված համայնքներում: Ընդ որում՝ տեսակավորումը տարբեր համայնքներում տարբեր եղանակներով է տեղի ունենում: Օրինակ՝ Վեդու և 15 գյուղական համայնքների պլաստիկ թափոնների տեսակավորումը կատարվում է հիմնականում աղբավայր տեղափոխվող կամ արդեն տեղակայված խառը աղբից: «Ուրբան» հիմնադրամի կողմից Ալավերդիում, Վանաձորում, Հրազդանում, Սևանում, Ախուրյանում, Սիսիանում և Կապանում

իրականացրած/իրականացվող աղբի տեսակավորման ծրագրերում պլաստիկ աղբը տեսակավորվում է աղբյուրի մոտ, աղբարտադրողների օգնությամբ:

Հայաստանում արդեն սկսվել է նորարարական և տարածաշրջանում նմանօրինակ չունեցող են աղբի վերամշակման առաջին փորձերը: Կապան քաղաքում հիմնվելու է պլաստիկ թափոններից շինանյութերի ստացման արտադրամաս, որի համար որպես հումք կծառայեն աղբից տարանջատված պլաստիկ թափոնները: Ընթանում են նաև լաբորատոր աշխատանքներ բույսերի մշակումից թաղանթներ ստանալու ուղղությամբ, որոնք կենցաղում կարող են փոխարինել պոլիէթիլենա թաղանթներին:

«Մաքուր դաշինք» ծրագրի շրջանակներում «Ուրբան» հիմնադրամը ծրագրային գործընկերների հետ միասին Գորայք համայնքին ցուցաբերելու է տեխնիկական օգնություն և տրամադրելու է ենթակառուցվածքներ (հատուկ տեսակավորման աղբամաններ և մասնագիտացված մեքենա, որը կարող է օգտագործվել նաև պլաստիկ աղբի տեղափոխման համար)՝ պլաստիկ տեսակավորելու համար:

Պլաստիկ աղբի տեսակավորումը կարող է նկատելի կրճատել արտադրվող աղբի ծավալները: Հայաստանում, տարբեր մեծության և կենցաղավարման վեց փորձնական համայնքներում կատարվել են աղբի բաղադրության վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնց արդյունքները ցույց են տվել, որ ընդհանուր աղբի մեջ պլաստիկ շշերի մասնաբաժինը (ծավալային առումով) մոտ 30% է (*Переработка бытовых отходов в Армении: обучение персонала, сбор данных, включая анализы отходов, рекомендации по действиям в управлении от+А1ходами, մայիս, 2011թ - Մազդեբուրգի Օստոն ֆոն Գերիկեի անվան համալսարանի և Երևանի Ճարտարագիտական համալսարան): Patricia Butler, 2008 - "Composition of Solid Waste in the Berd Municipal Dump in Tavush Marz, Armenia"*).

Ֆինանսական –տնտեսական ցուցանիշներ

ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքը

Համայնքապետարանի հետ համատեղ 2017 թվականին կատարվել է ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկման աշխատանքներ:

«Ուրբան» հիմնադրամի փորձագետների կողմից կազմակերպվել է աղբահանության ինքնարժեքի հաշվարկման դասընթաց և նրանց հատկացվել է ինքնարժեքի հաշվարկման ձև՝ էլեկտրոնային տարբերակով: Ըստ այդ ձևի հաշվարկվել է աղբահանության իրականացմա փաստացի ինքնարժեքը 2017թ.-ի համար: Աղյուսակ 5-ում ներկայացված են հաշվարկի ամփոփ տվյալները (ինքնարժեքի ամբողջական հաշվարկը կցվում է):

Աղյուսակ 5. Գորայքում ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկման ամփոփ աղյուսակ

Անվանումը	Ընդամենը՝ ՀՀ Դրամ
Աշխատուժ	12,568,048
Արտահագուստ և գործիքներ	348,500
Տեխնիկայի շահագործում և պահպանում	1,760,596
Վարչական ծախսեր	279,600
Բնապահպանական վճար	720,000
Ենթագումար	15,676,744
ԱԱՀ	783,837
Ընդհանուր ծախսը	16,460,581
Միավորի ինքնարժեքը, դրամ/խոր.մ	7950
Մեկ անձի կողմից արտադրվող ԿԿԹ-ների քանակությունը – խոր.մ/ամիս	0.067
Մեկ անձի հաշվով ամսեկան փաստացի ինքնարժեքը – դ/ամիս	533

Գորայք բազմաբնակավայր համայնքի աղբի հեռացման, կուտակման, տեղափոխման և տեղայնան ինքնարժեքը հաշվարկվել է հաշվի առնելով ծրագրի կողմից տրամադրվող մասնագիտացված աղբատար մեքենան, աղբամանները և այն տարեկան ծախսը, որն անհրաժեշտ է նորաստեղծ աղբահանության ընկերության գործունեության համար՝ ներառյալ աշխատուժը, արտահագուստը և գործիքները, տեխնիկայի շահագործումը և պահպանումը, վարչական ծախսերը, բնապահպանական վճարը և հարկերը: Հաշվարկի համաձայն՝ աղբահանությունը իրականացնելու համար համայնքին անհրաժեշտ է մոտ 16,500,000 դրամ: Որից ավելի քան 12, 500,000 դրամը աշխատակազմի, իսկ մոտ 280,000 դրամը վարչական ծախսեր են: Հաշվի առնելով անհրաժեշտ նվազագույն բոլոր ծախսերը՝ Գորայք բազմաբնակավայր համայնքում մեկ շնչի հաշվով **աղբահանության ամսական վճարը կկազմի 533 դրամ**, որը բավականին բարձր սակագին է նույնիսկ Հայաստանի մեծ համայնքների համար: Ճիշտ է, հնարավոր է նվազեցնել աղբահանության սակագինը, եթե իրականություն դառնա աղբի, հատկապես պլաստիկ աղբի տեսակավորման գործելակերպը, որը խթանվելու և իրականացվելու է Ծրագրի ողջ ընթացքում. պլաստիկ տեսակարար կշիռը ընդհանուր աղբի մեջ կազմում է 25-30%, ուստի տեսակավորման դեպքում, աղբավայր տեղափոխվող աղբի ծավալները կկրճատվեն, հետևաբար սակագինը նույնպես կնվազի որոշ չափով, սակայն կշարունակի մնալ բարձր:

Իրավիճակային վերլուծություն (SWOT)

Հաշվի առնելով Գորայք համայնքի աղբահանության ներկայիս իրավիճակը՝ կատարվել է աղբահանության ներքին պոտենցիալի և արտաքին բարենպաստ ազդեցության, ինչպես նաև համայնքի թույլ կողմերի և համայնքից դուրս գտնվող բացասական ազդեցությունների վերլուծություն (SWOT վերլուծություն): Ստորև ամփոփ ներկայացվում է այդ վերլուծության արդյունքները, որոնք կատարվել են աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ: Վերլուծությունը թույլ է տալիս ուրվագծել այն պայմանները, որոնք սպասվում են ապագայում՝ հաշվի առնելով արտաքին դրական և բացասական ազդեցությունները: Դրանք կներկայացվեն հաջորդ գլխում՝ ռազմավարության և աղբահանության տեսլականի մասում: Միևնույն ժամանակ, ներքին հատկանիշները օգնում են ուրվագծել և ձևակերպել ներկայիս հիմնահարցերն ու խնդիրները:

Աղյուսակ 6. Գորայք համայնքի աղբահանության SWOT վերլուծություն

<p>Ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none">• Կամք, ցանկություն ստեղծելու աղբահանության համակարգ• Աղբեռացում որոշ բնակավայրերում• Բնակավայրերի/համայնքների համախմբման ցանկությունը աղբահանության իրականացման շուրջ• Համայնքների միության առկայություն
<p>Թուօլ կողմեր</p> <ul style="list-style-type: none">• Աղբահանության ծառայության բացակայություն• Հանրային իրազեկության, գիտելիքի պակաս• Անտարբեր վարքագիծի առկայություն• Բնակչության ցանկության բացակայություն• Բնակավայրերի ցրվածություն• Ներքին օրենսդրության բացակայություն

<p>Հնարավոր թեթուօներ</p> <ul style="list-style-type: none">• «Մաքուր դաշինք» ծրագրի առկայություն• Աղբահանության ազգային ռազմավարության առկայություն• Միջպետական ճանապարհի առկայություն որ հեշտացնում է դեպի աղբավայր աղբի տեղափոխումը• Այլ ռազմավարական փաստաթղթերի (ազգային, մարզային) առկայությունը• Այլ բնակավայրերում աղբահանության ծառայության ընդլանման հնարավորությունը• Մասնավոր սեկտորի հնարվորություն• Բարենպաստ իրավական դաշտ
<p>ԿՏԱՆԳՆԵՐ</p> <ul style="list-style-type: none">• Օրենսդրությունը• Կլիմայական պայմանները• Աղբավայրի կարգավիճակը, հետագա շահագործման անորոշությունը

ԳԼՈՒԽ 2. Տեսլական և երկարաժամկետ նպատակներ

Աղբահանության գործունեության ուսումնասիրությունների հիման վրա վերլուծվել է աղբահանության ներկայիս իրավիճակը, որը փորձում է պատասխանել «որտե՞ղ ենք մենք այժմ» հարցին: Դրանք շարադրվել են ներկայիս իրավիճակի մասին մի շարք տվյալների և աղբահանության ներքին թույլ և ուժեղ կողմերի վերլուծությամբ: Միաժամանակ աշխատանքային խմբի հետ համատեղ որոշվել է աղբահանության տեսլականը և երկարաժամկետ նպատակները «որտե՞ղ ենք մենք ուզում լինել» հարցադրմամբ: Աղբահանության տեսլականը արտահայտում է հավաքական ըմբռնումը այն բանի, թե ապագայում ինչ ցանկալի և իդեալական իրավիճակի պետք է ձգտի հայտնվել աղբահանության կազմակերպումը Գորայք համայնքում: Աղբահանության տեսլականը աշխատանքային խմբի հետ քննարկման արդյունքներով բերվել է հետևյալ ձևակերպմանը.

Մաքուր, առողջ, կանաչ, բարեկարգ համայնք՝ աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով

Աղբահանության ոլորտները և ռազմավարական նպատակները

Աշխատանքային խմբի հետ համատեղ խմբավորվել են զարգացման ոլորտները, որոշվել են աղբահանության ռազմավարական ուղղությունները և սահմանվել են երկարաժամկետ նպատակներ: Աղբահանության զարգացումը պահանջում է կոմպլեքս մոտեցում, հետևաբար ռազմավարությունը պետք է հիմնվի տարբեր ոլորտների զարգացման վրա: Այդ ոլորտներն են:

Ա. Համակարգի զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին օրենսդրություն և կանոնակարգեր)

Բ. Աղբահանության տեխնիկական միջոցների զարգացում (Աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման, վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր)

Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն (ինքնածախսաձեռնարկման հնարավորություններ և տնտեսական արդյունավետության բարձրացում, աղբահանության վճարների գանձման մեթոդներ, ստացականների և պայմանագրերի կիրառման ձևեր, թափոնների տեսակավորման և վերամշակման հնարավորություններ և այլն)

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն (երկկողմանի տեղեկատվության կիրառում):

Նշված ուղղություններին համապատասխան ձևակերպվել են 4 երկարաժամկետ (2017-2021թ.թ.) նպատակներ, հաշվի առնելով Գորայք համայնքի աղբահանության տեսլականը: Ստորև ձևակերպված յուրաքանչյուր նպատակ ենթադրում է Գորայք համայնքի աղբահանությանը վերաբերող առանձին խնդիրների և նրանցով պայմանավորված կոնկրետ ծրագրերի իրականացում: Իսկ յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար ԳԼՈՒԽ 3-ում դրված են խնդիրներ և առաջադրանքներ, որոնց լուծման համար նշված են ժամկետներ, պատասխանատուներ և հղում ֆինանսական աղբյուրներին:

Ստորև ձևակերպված են այդ 4 նպատակները, որոնք համապատասխանում են վերոնշյալ ոլորտներին.

Ա. Ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին օրենսդրություն և կանոնակարգեր):

Նպատակ 1. Բարելավել Գորայք համայնքում աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային օրինական դաշտ:

Բ. Աղբահանության կառավարման ենթակառուցվածք (ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման և վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր):

Նպատակ 2. Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Գորայք համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասազերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:


Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն:

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն:

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

Ստորև բերվում է տեսլականի և նպատակների ամփոփ սխեման.



ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հիմնահարցերի դասակարգման չափանիշները

Աղբահանության ծառայության հետ կապված են մյուս ոլորտներին առնչվող բազմաթիվ հիմնահարցեր (պրոբլեմներ), որոնց լուծման շնորհիվ է հնարավոր աղբահանության կառավարման գործընթացի արդյունավետ զարգացումը: Այսպես, աշխատանքային խմբի հետ համատեղ քննարկվել, խմբավորվել և դասակարգվել են առաջադրած հիմնահարցերը: Հիմնահարցերի առաջադրումը կատարվել է «մտազրոհի» մեթոդով: Աշխատանքային խմբի անդամների կողմից առաջադրված հիմնահարցերը խմբավորվել են չորս հիմնական ոլորտների, որոնք նշված են նախորդ գլխում: Հիմնահարցերը վերլուծվել են Ծրագրի փորձագետների և աշխատակիցների կողմից, այսինքն՝ ուսումնասիրվել են դրանց պատճառա-հետևանքային կապերը: Կատարվել է նաև հիմնահարցերի առաջնահերթությունների որոշում կշիռա-միավորային մեթոդով:

Հիմնահարցերի առաջնահերթությունները որոշվել են հետևյալ մեթոդիկայով: Նախ, աշխատանքային խմբի հետ համատեղ մշակվել են այն չափանիշները, որոնցով պետք է գնահատվեն հիմնահարցերը: Այնուհետև որոշվել է յուրաքանչյուր չափանիշի կշիռը: Դրա համար կիրառվել է քվեարկության մեխանիզմ: Յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվել քվեարկել այս կամ այն չափանիշի համար: Քվեարկության արդյունքներով յուրաքանչյուր չափանիշ ստացել է կշիռ, որը հանդիսանում է հաստատուն բազմապատկիչ: Յուրաքանչյուր հիմնահարցի համար կատարված է քանակական կամ որակական բաժանում ըստ բալերի: Հիմնահարցերի առաջնահերթությունները որոշվում են չափանիշի բազմապատկիչի և հիմնահարցի որոշված բալային արժեքի արտադրյալով: Գորայք համայնքում այդ չափանիշներն են՝

- հիմնահարցի լուծման համար անհրաժեշտ դրամական արժեքի մոտավոր գնահատականը,
- հիմնահարցի լուծման բնապահպանական և առողջապահական ազդեցությունը,
- հիմնահարցի լուծման արդյունքից օգտվող շահառու բնակչության թիվը,
- հիմնահարցի լուծման համար հանրության կողմից աջակցությունը:

Աղյուսակ 7: Գորայք համայնքի աղբահանության հիմնահարցերի գնահատման չափանիշները

ՉԱՓԱՆԻՇ	Գնահատման սանդղակ	Միավոր	Կշիռ
Գնահատված դրամական արժեքը	< 500,000 դրամ	4	1
	500,00- 2,500,000 դրամ	3	
	2,500,000 – 5,000,000 դրամ	2	
	> 5,000,000 դրամ	1	
Բնապահպանական և առողջապահական ազդեցությունը	բացասական	0	1.6
	չկա	1	
	ցածր	2	
	միջին	3	
	բարձր	4	
Շահառու բնակչության թիվը	< 25%	1	1.1
	25%-50%	2	
	50%-75%	3	
	75%-100%	4	
Հանրային աջակցություն	չկա	1	1
	ցածր	2	
	միջին	3	
	բարձր	4	


Աղյուսակ 8. Գորայք համայնք. Աղբահանության խնդիրների գնահատումը և դասակարգումը ըստ առաջնահերթության

##	Հիմնահարցեր	Ընդ. Գորայք	Ընդ. Սառնակունք	Ընդ. Ծղուկ	Ընդ. Սպանդարյան	Ընդ. Միջին
1	Նոր մասնագիտացված տեխնիկայի ձեռքբերում	31	28.7	28.7	28.7	29.3
2	Աղբի տեսակավորման համար հատուկ աղբամանների տեղադրում	26,0	27	27	27	27.0
3	Հանրային իրազեկում, տեղեկատվական նյութերի մշակում և տարածում	28.3	27	25	27	26.8
4	Մամլիչ կամ մանրացնող մեքենաների բացակայություն	28.3	26	25	27	26.6
5	Առանձնացված աղբի ընդունման կետերի ստեղծում	27.3	26	27	25	26.3
6	Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար աղբահանության նորմատիվների վերահաշվարկում	23,3	25	25	25	25.0
7	Աղբահանությանը վերաբերող կանոնակարգերի, իրավական ակտերի և գրավոր պայմանագրերի մշակում և հաստատում	23.3	25	25	25	24.6
8	Բնակիչների գոհունակության և վճարունակության հարցումների անցկացում	18.3	25	27	25	23.8
9	Շաբաթօրյակների և կրթական սեմինարների կազմակերպում	20	25	25	25	23.8
10	Տուգանքների կիրառում	11,0	21.7	25	18.4	21.7
11	Կրկնակի ստացականների օգտագործում	17.7	18,3	18.3	18.3	18.1
12	Ընդհանուր աղբի աղբամանների տեղադրում	24,0	18.35	11.4	18.3	16.0

ԳԼՈՒԽ 4. ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրները ձևակերպվել են ըստ առաջ քաշված հիմնահարցերի: Ինչպես կարելի է նկատել ստորև բերված սխեմայից, այդ խնդիրների լուծումները նպատակաուղղված են ռազմավարական առանձին նպատակների իրականացմանը: Այդ խնդիրների լուծման առաջարկվող ճանապարհները հենց ծրագրերն/նախագծերն են: Ծրագրերի/նախագծերի իրականացման արդյունքները պետք է լինեն չափելի և իրականանալի կոնկրետ ժամանակահատվածում: Ծրագրերի կատարումը կատարվում է համեմատաբար (համեմատած նպատակների հետ) կարճ ժամանակահատվածներում: Խնդիրները խմբավորվել են ըստ առանձին ոլորտների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին ռազմավարական նպատակ: Որևէ նպատակի իրականացումը պայմանավորված է առանձին խնդիրների լուծումով, այսինքն՝ ծրագրերի/նախագծերի իրականացմամբ:

Աղբահանության ռազմավարական նպատակները և խնդիրները



Հաշվի առնելով առաջադրված խնդիրները կազմվել են կոնկրետ ծրագրեր, որոնք ներառում են հիմնահարցի նկարագրությունը, գործողությունները կամ առաջադրանքները, դրանց կատարման ժամկետները, պատասխանատուները, ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, յուրաքանչյուր ծրագրի սպասվելիք արդյունքները և կապը մյուս ծրագրերի հետ: Ժամանակային առումով ծրագրերը բաժանվել են երեք հիմնական մասերի՝ ընթացիկ (2017-2018), կարճաժամկետ (2017-2019) և երկարաժամկետ ծրագրեր (2017-2021):

Այն ծրագրերը, որոնցում ներգրավված է «Մաքուր Դաշինք» ծրագիրը, խմբավորվել են որպես ընթացիկ կամ կարճաժամկետ ծրագրեր նույնպես, քանի որ այդ ծրագրերն արդեն իսկ իրականացման մեջ են: Դրանք կատարվում են «Մաքուր Դաշինք» ծրագրի շրջանակներում:

Աղյուսակ 9. Աղբահանության ռազմավարական նպատակներ, առաջադրված խնդիրներ և ծրագրեր

Մաքուր, առողջ, կանաչ, բարեկարգ համայնք՝ աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐ	ԾՐԱԳՐԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԻՐԱԿԱ- ԿԱՆԱՑ- ՆՈՂ	ՖԻՆ. ԱՂՔՅՈՒՐ
Նպատակ 1. Բարելավել աղբահանության կառավարման համակարգը և ապահովել բարենպաստ իրավական կանոնադրություն	ԽՆԴԻՐ 1.1 Թափոնների կառավարման իրավական կանոնակարգման ապահովում	Ծրագիր 1.1.1 Աղբահանությանը վերաբերող կանոնակարգերի և իրավական ակտերի մշակում և հաստատում	Ընթացիկ 2017-2018թթ	Համայնք	Համայնք
		Ծրագիր 1.1.2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց պայմանագրերի մշակում և պայմանագրերի թվի ավելացում	Ընթացիկ 2017-2018թթ	Համայնք	Համայնք
Նպատակ 2. Ուժեղացնել աղբահանության կառավարման	ԽՆԴԻՐ 2.1. Աղբի հեռացման համար բարելավված ենթակառուցվածքների ներդրում աղբամանների	Ծրագիր 2.1.1 Տեղադրել աղբամաններ կոշտ կենցաղային խառը թափոնների համար	Երկարաժամկետ 2017-2021թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐ	ԾՐԱԳՐԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԻՐԱԿԱ- ԿԱՆԱՑ- ՆՈՂ	ՖԻՆ. ԱՂԲՅՈՒՐ
Ենթակառուցվածքները քաղաքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասագերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:	տեղադրման միջոցով	Ծրագիր 2.1.2 Տեղադրել պլաստիկ թափոնների առանձնացման համար նախատեսված աղբամաններ	Ընթացիկ 2017-2018թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ
	ԽՆԴԻՐ 2.2 Աղբի տեսակավորման ենթակառուցվածքների ստեղծում	Ծրագիր 2.2.1 Ձեռք բերել մամլիչ կամ մանրացնող սարքավորումներ պլաստիկ թափոնների համար	Կարճաժամկետ 2017-2019թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ
		Ծրագիր 2.2.2 Ստեղծել ընդունման կետեր առանձնացված աղբի	Երկարաժամկետ 2017-2021թթ	Համայնք	Համայնք
	ԽՆԴԻՐ 2.3 Հեռացված աղբի տեղափոխման և տեղադրման ենթակառուցվածքների ապահովում և բարելավում	Ծրագիր 2.3.1 Ձեռք բերել աղբահանության մասնագիտացված նոր մեքենա	Կարճաժամկետ 2017-2019թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ
Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը	ԽՆԴԻՐ 3.1 Կրկնակի ստացականների կիրառում	Ծրագիր 3.1. 1 Թողարկել կրկնակի ստացականներ աղբահանության վճարի համար	Երկարաժամկետ 2017-2021թթ	Համայնք	Համայնք
	ԽՆԴԻՐ 3.2 Աղբահանության ծառայության ծախսերի տնտեսապես հիմնավորված հաշվարկի ապահովում	Ծրագիր 3.2. 1 Ծառայության մատուցման ինքնարժեքի և ծառայության վարձավճարի հաշվարկում և սահմանում	Ընթացիկ 2017-2018թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ
Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման	ԽՆԴԻՐ 4.1 Բնակիչների գոհունակության և վճարունակության հարցում	Ծրագիր 4.1. 1 Բնակչության հետ հարցումների պարբերաբար անցկացում	Երկարաժամկետ 2017-2021թթ	Համայնք	Համայնք
	ԽՆԴԻՐ 4.2 Հանրային իրազեկում, տեղեկատվական նյութերի մշակում և տարածում	Ծրագիր 4.2 . 1 Բուկլետների, տեղեկատվական թերթիկների տպագրություն և բաժանում	Երկարաժամկետ 2017-2021թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐ	ԾՐԱԳՐԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԻՐԱԿԱ- ԿԱՆԱՑ- ՆՈՂ	ՖԻՆ. ԱՂԲՅՈՒՐ
գործընթացում:	ԽՆԴԻՐ 4.3 Խրախուսական և կանխարգելման մեխանիզմների ներդրում	Ծրագիր 4. 3. 1 Սահմանել մրցանակներ մաքուր բակերի համար, լուսաբանել և տարածել լավագույն գործելակերպը	Երկարաժամկետ 2017-2021թթ	«Մաքուր Դաշինք» ծրագիր	ԵՄ
		Ծրագիր 4. 3. 2 Սահմանել տուճանքներ, տարածել տեղեկատվություն տուճանքների, դրանց չափերի մասին	Երկարաժամկետ 2017-2021թթ	Համայնք	Համայնք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրամիության աջակցությամբ իրականացվող «Մաքուր Ղաշինք» ծրագրի շրջանակում կատարվող ներդրումների արդյունքում լիովին կլուծվի Գորայք բազմաբնակավայր համայնքի (Գորայք, Սպանդարյան, Սառնակունք և Ծղուկ բնակավայրեր) աղբահանության խնդիրը:

Առաջին հայացքից Համայնքը և Ծրագիրը հասել են նախանշված արդյունքին. կա աղբահանող ընկերություն, առկա են անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքները աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման, տեղակայման, տեսակավարման համար: Սակայն, վերլուծությունը ցույց է տալիս, որ աղբահանության խնդիրը լուծվում է չափազանց անարդյունավետ կերպով.

- Աղբահանության իրականացման տարեկան ծախսը ըստ մոտավոր հաշվարկների՝ մոտ 16,500,000 դրամ է
- Ինքնաձախսածածկման հասնելու համար, համայնքը պետք է բնակիչներից հավաքագրի շուրջ 10,000,000 դրամ, մեկ անձի հաշվով՝ ամսեկան մոտ 530 դրամ, որն աննախադեպ բարձր գումար է՝ մասնավորապես Հայաստանի գյուղական բնակավայրերի համար՝ հաշվի առնելով, որ աղբահանություն գյուղերում գրեթե չի կատարվում և վճարելու ավանդույթ դեռևս չի ձևավորվել: Ամբողջ բեռը ընկնում է համայնքի բյուջեի վրա: Նույնիսկ Ծրագրի շրջանակում աղբի տեսակավորման գործելակերպի ներդրումից հետո, երբ աղբի ծավալները կկրճատվեն, սակագինը մեկ շնչի հաշվով 400 դրամից ավել կլինի: Ի լրումն՝ շուրջ 6,500,000 դրամ պետք է հավաքագրվի իրավաբանական անձանցից կամ վճարվի համայնքի բյուջեի հաշվին:
- Համայնքը չունի աղբահանություն իրականացնող ընկերություն, և Ծրագրի շրջանակներում, նախատեսվում է ստեղծել այդպիսի ընկերություն: Աղբահանության ծախսերի ինքնաձախսածածկման համար, ինչպես նշվեց, նորաստեղծ ընկերությանն անհրաժեշտ կլինի հավաքագրել մոտ 16,500,000 դրամ, որից մոտ 13,000,000 դրամը աշխատակազմի և վարչական ծախսերն են: Ծրագրի ընթացքում աշխատակազմի և վարչական ծախսերը հոգալու է Ծրագիրը: Սակայն Ծրագրի ավարտից հետո նորաստեղծ ընկերությունը կա՛մ պետք է կարողանա լրիվ հավաքագրել այդ գումարը՝ ներառյալ բնակչությունից՝ 400-500 դրամ/մարդ, կա՛մ համայնքը ամբողջովին կամ մասամբ պետք է ծածկի այդ ծախսերը, որը բավականին մեծ գումար է համայնքի բյուջեի համար:
- Որպեսզի կառավարի համայնքում արտադրված ամբողջ աղբի ծավալը, Ծրագրի տրամադրած աղբատար մեքենային բավարար է տարվա ընթացքում աշխատել ընդամենը 52 օր կամ շաբաթական մեկ անգամ՝ մեկ պտույտ կատարելով չորս բնակավայրերով, այնուհետև դեպի աղբավայր ու հետադարձ դեպի Գորայք բնակավայր: Ընդ որում, շաբաթական մեկ անգամ պտույտը կատարելով և արտադրված ամբողջ աղբը հավաքելով հանդերձ՝ մեքենան կլցվի իր բեռնատարողության կեսի չափով միայն: Նման աշխատանքը մեքենայի համար շատ անարդյունավետ է, քանի որ մեկ երթի տևողությունը, ըստ հաշվարկի, չի կարող պակաս լինել մեկ լրիվ աշխատանքային օրվանից. շաբաթվա մնացած 6 օրը մեքենան փաստորեն ստպված է ենթարկվել պարապուրդի: Եթե հաշվի առնենք, որ Ծրագրի շրջանակներում ներդրվելու է պլաստիկ թափոնների տեսակավորում և որ նորմալ տեսակավորման դեպքում աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը կկրճատվի 15-25%-ով, ապա մեքենան նույնիսկ կիսով չափ չի լցվի:

Արդյունավետությունը կարևորվում է նաև Եվրամիության կողմից, որը գերադասում աջակցել համայնքին նվազագույն միջոցներով իրականացնելու հնարավորինս արդյունավետ աղբահանություն:

Կարող են դիտարկվել հետևյալ տարբերակները.

1. Տրամադրվող մասնագիտացված մեքենան սպասարկում է նաև այլ համայնքների, բացի Գորայք բազմաբնակավայր համայնքից

Այս տարբերակով, Գորայք համայնքը պետք է սպասարկի համայնքից դուրս գտնվող այլ բնակավայրերի: Մոտակա բնակավայրերն են Անգեղակոթ, Շաղաթ, Բալաք, Մուծք, Շաքի և Իշխանասար համայնքները: Նպատակահարմար կլինեն, եթե մեքենան մեկ երթով այցելեր այս բոլոր համայնքները, հավաքեր աղբը և տեղափոխեր աղբավայր: Սակայն քանի որ այդ համայնքները գտնվում են ավելի հեռու, քան Գորայք համայնքի բնակավայրերը և ոչ նույն «գծի» վրա, մեքենան ի վիճակի չի լինի մեկ օրում ավարտել երթը՝ մտնելով բոլոր համայնքները (հիշեցնենք, որ Գորայքի չորս բնակավայրերի աղբահանությունը, աղբի տեղափոխումը աղբավայր և վերադարձը Գորայք մեքենան ի վիճակի է կատարել մեկ օրում): Մեքենան մեկ օրում ի վիճակի կլինի մտնել առավելագույնը երկու համայնք: Լրացուցիչ համայնքներ հնարավոր չէ այցելել մեկ օրում նաև այն պատճառով, որ այդ համայնքները գտնվում են ճանապարհային տարբեր ուղղությունների վրա: Կպահանջվի առնվազն երեք օր՝ մեկական առանձին երթերով, այդ բոլոր համայնքներն այցելելու համար: Դա անարդյունավետ կլինի, քանի որ մեքենան այդքան վազք կտարելով հանդերձ՝ կլինի չափազանց թերբեռնված՝ ծախսելով լրացուցիչ վառելիք: Լրացուցիչ համայնքներ այցելելիս կավելանան նաև պահպանման ծախսերը: Վարչական և աշխատակազմի ծախսերը չեն նվազի, կմնան առնվազն նույնը: Աղբի հավաքման և տեղակայման ինքնարժեքի շոշափելի փոփոխություն չի լինի: Բացի վերոնշյալից, նույնքերին սպասվող վարչատարածքային բարեփոխումներ հաջորդ փուլում Սիսիանը դառնալու է բազմաբնակավայր համայնք՝ ներառելով նաև Անգեղակոթ, Շաղաթ, Բալաք, Մուծք, Շաքի և Իշխանասար համայնքները՝ որպես բնակավայրեր: Այդ բնակավայրերում աղբահանությունը ավելի արդյունավետ կիրականացնի Սիսիան համայնքը, որն ունի աղբահանող կազմակերպություն և անհամեմատ լավ տեխնիկական հնարավորություններ:

2. Տրամադրվող մասնագիտացված մեքենան, Գորայքում աշխատելուց հետո կարող է տրվել վարձակալություն

Այս տարբերակի առավելությունը մեքենայի վարձակալական գումարն է, որով կարելի է որոշ չափով սուբսիդավորել/մեղմացնել սակագինը: Սակայն այս դեպքում ևս առկա են այն գրեթե բոլոր բացերը, որոնք նշվեց վերոնշյալ առաջին տարբերակում. աշխատակազմի/վարչական ծախսերը չեն նվազելու, ավելանալու են մեքենայի պահպանման ծախսերը, մեքենան տարածաշրջանի բակչության և հետևաբար արտադրված աղբի սակավության պատճառով կշարունակի մնալ թերբեռնված և վարձակալության համար ոչ եկամտաբեր: Վարձակալությունը հավանաբար արդարացված է Սիսիան համայնքի դեպքում, սակայն քանի որ այս տարբերակով Գորայքը շարունակելու է միաժամանակ իրականացնել իր համայնքի աղբահանությունը, ստիպված է պահպանել նույն վարչական և աշխատակազմի ծախսերը: Ի լրումն՝ կառավարման տեսանկյունից արդյունավետ չէ

միևնույն մեքենան մի օր օգտագործել համայնքում, իսկ մյուս օրերը հանձնել վարձակալության: Դա նպատակահարմար կարող էր լինել առնվազն երկու մեքենայի առկայության դեպքում:

3. Ձեռք է բերվում ավելի փոքր աղբատար

Մյուս տարբերակը ավելի փոքր բեռնատարողությամբ մեքենայի ձեռքբերումն է: Այս տարբերակի առավելությունն այն է, որ մեքենան թերբեռնված չի լինի, սակայն աշխատակազմի/վարչական ծախսերը չեն նվազի, հետևաբար չի նվազի նաև սակագինը: Ճիշտ է մեքենան կաշխատի ավելի արդյունավետ, սակայն կրկին աղբահանությունը կիրականացվի շաբաթը մեկ անգամ, ընդհանուր առմամբ ծառայությունը դարձնելով անարդյունավետ, քանի որ մնացած օրերին մեքենան նորից կգտնվի պարապուրդի մեջ:

4. Մեքենան տրամադրվում է Սիսիան համայնքին՝ պայմանով, որ այն ապահովի նաև Գորայքի աղբահանությունը

Այս տարբերակը պետք է դիտարկել Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների համատեքստում: 2017թ. նոյեմբերին, բարեփոխումների արդյունքում, Սիսիանը դառնալու է բազմաբնակավայր համայնք՝ ներառելով Սիսիանի տարածաշրջանի բոլոր համայնքները, բացի Գորայքից: Այս տարբերակով առաջարկվում է աղբատար մեքենան տրամադրել Սիսիան համայնքին՝ պայմանով, որ Սիսիանի աղբահանության կազմակերպությունը իրականացնի նաև Գորայքի աղբահանությունը: Սիսիան համայնքի կողմից աղբահանության իրականացումն ունի մի շարք առավելություններ.

- Սիսիանն ունի աղբահանություն ունեցող գործող կազմակերպություն:
- Ունի համապատասխան տեխնիկա և տրամադրվող մասնագիտացված մեքենան կլինի համալրում տարածաշրջանում աղբահանություն իրականացնելու համար:
- Կիրականացնի ավելի արդյունավետ աղբահանություն մասշտաբի էֆֆեկտի շնորհիվ, քանի որ դառնալով բազմաբնակավայր համայնք, կներառի ավելի քան 20,000 աղբարտադրող, որին կավելանան Գորայքի մոտ 2,000 աղբարտադրողները:
- Աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքը կնվազի մոտ 150-200 դրամ՝ մասշտաբի էֆֆեկտի շնորհիվ:
- Գորայքի աղբահանության իրականացման հնարավոր միակ ծախսը կլինի աղբահանության իրականացման դիմաց սահմանված վարձավճարը Սիսիան համայնքին: Արդյունքում, համայնքի աղբահանության հիմնական ռազմավարական խնդիրները կհասցեագրվեն՝ առանց վարչական հսկա ծախսերի և առավելագույն արդյունավետորեն:

Որպես արդյունավետ տարբերակ՝ առաջարկվում է 4-րդ տարբերակը, որի համար անհրաժեշտ կլինի Երկու համայնքների ղեկավարների սկզբունքային գրավոր համաձայնությունը աղբատար մեքենան Սիսիան համայնքին տրամադրելու և Սիսիան համայնքի կողմից Գորայք համայնքի աղբահանությունն իրականացնելու վերաբերյալ: Այնուհետև, անհարաժեշտ է Գորայք համայնքի ավագանու որոշում աղբահանության ծառայությունը Սիսիան համայնքից «գնելու» վերաբերյալ: Երկու համայնքների միջև պետք է ստորագրվի համաձայնագիր, որտեղ հստակ պետք է նշված լինեն կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները:

Օգտագործված հրատարակումների ցուցակ

1. Strategic Planning for Local Government, Gerald L. Gordon, ICMA, Second Edition, 2002
2. Strategic Management for the Public Services, Paul Joyce, Open University Press, Buckingham/Philadelphia, 1999.
3. How Effective Are Your Community Services?, Procedures for Performance Management, Harry P.Hatry, Third Edition, ICMA/UI
4. Strategic Planning Guide for Municipal Solid Waste Management, World Bank.
5. Practical Guidebook on Strategic Planning in Municipal Waste Management, Dariusz Kobus, The World Bank, 2003
6. Municipal Waste Management Program for the city of Ijevan, LGP/Urban Institute, 2002
7. Private Sector Participation In Municipal Solid Waste Services in Developing Countries. Sandra Cointreau-Levine, Vol.1 The Formal Sector, Series: Urban Management program.